Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

Մեկնարկ՝ «30» «մարտի» 2026թ.
ք. Երևան **Ժամը՝ 12:00**
Ավարտ՝ «18» «ապրիլի» 2026թ.
Ժամը՝ 12:00

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ ՝ *(ԳՊ/ԳԱՊ)՝* Նորիկ Մնոյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) ՝ Ռիմա Հարությունյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ) ՝ Հրանտ Մինասյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Լաուրա Գևորգյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Էդգար Ֆրանգուլյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2026 թվականի մարտի 30-ին ժամը՝ 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների կատարման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Մ-2. Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 134+600 – կմ 139+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ	*14 693 514*

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից՝

N	Մասնակիցների անվանումները	Հասցե /ՀՎՀՀ/	Էլ. փոստ
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ /00813453/	lilit.poghosyan@dorproject.am lil.poghosyan17@gmail.com
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ավան, Սայաթ-Նովա թաղ. 8 /08417251/	info@haldi.am

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթներում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես.

- «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում առկա էր անհամապատասխանություն:
- «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էր անհամապատասխանություն Հավելված 1-ում և թերի էին կցված Հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.4 ենթակետով պահանջված օրենքով սահմանված լիցենզիայի ներքո նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ 16.04.2026թ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

18. 04.2026 թվականին, ժամը 12:00–ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ բոլոր մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ մասնակիցներ կողմից՝

Չափաբաժին 1՝ Մ-2. Երևան-Երասխ-Նորավան- Տաթև-Կապան-Մեղրի-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 134+600 – կմ 139+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	**«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ**	**833 000**	**166 600**	**999 600**
2	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	3 250 000	650 000	3 900 000

6.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ**-ին:

7.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ՏԿԵՆ-ՀԲՄԽԾՁԲ-2026/12ՏՀ** ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

7.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

7.4 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ** -ին:

8. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

8.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

9. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

9.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Նորիկ Մնոյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Ռիմա Հարությունյան** .....

Հրանտ Մինասյան .....

Լաուրա Գևորգյան .....

Էդգար Ֆրանգուլյան .....

Քարտուղար՝ **Անի Բաղալյան** .....